Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ

# ՇԻՐԱԿՈՒՄ 1936-37 թ.թ. ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Խորհրդային իշխանությունների կողմից 1930-37թ.թ. բռնությունները հիմնականում ուղղված էին ճնշելու և ոչնչացնելու վարչակարգի հակառակորդներին: Իշխող վարչակարգը նման մեթոդներով լուծում էր ոչ միայն ընդդիմադիրների ոչնչացման, այլ նաև՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հարցեր: 20-ական թվականներին ստալինականները, չընդունելով ՆԷՊ-ի քաղաքական, տնտեսական և սոցիալական գաղափարախոսությունը, կողմ լինելով հանրային սեփականության ձևերին, արմատապես մերժում էին շուկայական հարաբերությունների զարգացումը:

20-30-ական թվականներին կիրառվող բռնությունների արմատները պետք է փնտրել ոչ միայն «Ստալինի բռնապետության», հոգեկան խառնվածքի մեջ, այլև այդ տարիներին ԽՍՀՄ-ում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների իրականացման շղթայի մեջ:

Ստալինյան բռնությունները սկսվեցին 20-ական թվականներին՝ ՆԷՊ-ի առաջին տարիներին և իրենց գագաթնակետին հասան 1937 թ-ին: ՆԷՊ-ը խորհրդային ժողովուրդների ու ազգությունների, որոշ սոցիալական խմբերի (առևտրով զբաղվողների, արտադրական ձեռնարկությունների տնօրենների, արտելների աշխատողների) հարստացման ու նախնական կապիտալ կուտակելու նպաստավոր նախապայմաններ էր ստեղծում: Շ. Ֆիցպատրիկի բնորոշմամբ՝ «նէպմանները նոր բուրժուազիայի ներկայացուցիչներ են»[1]: Քսանական թվականների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ՆԷՊ-ը խթանում էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչը դրականորեն էր անդրադառնում երկրի բնակչության ապրելակերպի և կենսամակարդակի աճի վրա: Նշենք, որ ՆԷՊ-ի միայն առաջին տարիներին նկատվեց արդյունաբերական համախառն արտադրանքի 40-50% տարեկան աճ:

Ստալինյան վարչակարգը լավ էր հասկանում նէպմանների բարգավաճման քաղաքական վտանգը: Մշակվեց մի նոր սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծրագիր, որը ձախողելու էր ՆԷՊ-ի գործընթացը երկրում: Ստալինյան վարչակարգի նոր սոցիալ-տնտեսական ծրագրի հիմքում երկրի կոլեկտիվացումն ու արդյունաբերության գրեթե հարյուր տոկոսանոց ազգայնացումն էր, ինչը իր բնույթով նոր տնտեսական քաղաքականության կտրուկ հակապատկերն էր:

Երկրի արդյունաբերության զարգացումը և տնտեսության ինդուստրիալիզացումը կապվում էին Սիբիրը բնակեցնելու և հարուստ բնական ռեսուրսները օգտագործելու հետ, որովհետև ԽՍՀՄ-ի բնական ռեսուրսների պաշարների 80%-ը գտնվում է Սիբիրում, իսկ բնակչության մոտ 90%-ը բնակվում էր երկրի եվրոպական մասում:

Ինչպես նշում է Պ. Ոսկերչյանը՝ «<u>Պրոլետարական իշխանությունը</u> (այսինքն՝ ստալինականները. ընդգծումը հեղինակինն է) սուր դասակարգային պայքարում հետևողականորեն անց էր կացնում կապիտալիստական տարրերի՝ արդյունաբերողների, կուլակների, առևտրականների սահմանափակման ու դուրս մղման քաղաքականություն, ուժեղացվում էր կապիտալիստների հարկումը, կրճատվում են արտադրության միջոցները և վարձու աշխատանքը բուրժուազիայի կողմից օգտագործվելու հնարավորությունները: ... Հողը, առևտուրը, գինը, վարկը, տնտեսական հաշվարկը պետությունը կենտրոնացնում է իր ձեռքում»[3]: Այսպես կոչված՝«պրոլետարական իշխանության» համար կենսական անհրաժեշտություն է բնակչության ներդասակարգային խմբերի բաժանումը: Միայն գյուղական բնակչությունը բաժանվում էր երեք հիմնական խմբերի՝ աղքատների, միջակների և կուլակների: Ներդասակարգային խմբավորման հիմքը համարվում էին զբաղմունքը, աշխատանքի արդյունքից գոյացած միջոցները: Օրինակ՝ գերեզմանափորները և վարորդները համարվում էին պրոլետարներ, իսկ տնային անտեսուհիներին, վաճառողներն և բեռնակիրները դասվում էին սպասարկման ծառայողների շարքը:

---

*1. Вопросы истории, 1990г., № 8, стр. 21.*
*2. Вопросы истории, 1991г., № 3, стр. 68.*
*3. Պ. Ոսկերչյան, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920-40թ.թ., Երևան, 1984թ., էջ 39-41:*

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանը գերազանցապես մանր գյուղատնտեսական երկիր էր ավելի, քան Ռուսաստանը: Սա էլ հանգեցրեց նրան, որ նորաստեղծ Խորհրդային Հայաստանում «համատարած» կոլեկտիվացման գործընթացը ավելի սար բնույթ ստացավ երկրի սոցիալ-ունտեսական ու քաղաքական կյանքում: Բնակչության որոշ խմբերի թույլ չէին տալիս մասնակցելու երկրի օրենսդիր մարմինների ընտրություններին: Ձայնազուրկների թիվը մեկ շնչի հաշվով Խորհրդային Հայաստանում, ավելի մեծ էր, քան Միության այլ հանրապետություններում: Օրինակ՝ Ռուսաստանում ձայնազուրկները կազմում էին ազգաբնակչության 4%, Վրաստանում՝ 4,5%, Ադրբեջանում՝ 5,7%, Ուկրաինայում՝ 4,5%, իսկ Հայաստանում 6%: Ս. Տեր-Գաբրիելյանը նման երևույթը «քյալլազոզություն» է համարում, գրելով. «մեր գյուղերում այդքան մեծ տոկոս կուլակություն և խորհրդա ին իշխանությանը անհարազատ տարրեր չկան»[5]:

Հայաստանի բազմահազար քաղաքացիներ, պիտակավորվելով որպես «կուլակներ», «տրոցկիստներ», «ժողովրդի թշնամիներ», «դաշնակցականներ», «նէպմաններ», «լրտեսներ» աքսորվում էին հայրենիքից Սիրիր, ենթարկվում տաժանակիր աշխատանքների, գնդակահարվում:

Ստալինյան իշխանության տարիները, խորհրդային երկրի պատմության մեջ թողեցին դժնի ու արյունոտ հետքեր: 1927-38թ.թ. սովից բանտերում մահացավ 7,9 մլն մարդ, 30-40-ական թ.թ. սովից, բռնի կոլեկտիվացումից ու այլազան բռնություններից մահացել է ավելի քան 20 մլն. մարդ[6]: Հայկական խՍՀՄ-ում բռնությունների ալիքը ավելի ահագնացավ ՀԿ (բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար՝ 35-ամյա Ա. Խանջյանի սպանությունից հետո: 1937թ. Հայկական ԽՍՀՄ-ում բռնադատվածների թիվը հասավ 4700 մարդու, որից 3200-ը կամ 68%-ը դատապարտվեց գնդակահարության: 1938թ. գնդակահարվածների թիվը կազմեց 3050 մարդ, տարբեր ժամկետներով դատապարտվեց 1500 մարդ[7]:

Շիրակի անահսական շրջանից 1936-37թ.թ. բռնադատվածների ցուցակը (614 մարդ) դուրս ենք բերել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 1993-94թ.թ. հրապարակված նյութերից: (տե՛ս աղյուսակ 1): Սա բռնադատվածների ճշգրտված և վերջնական թիվը չէ:

Շիրակի տարածաշրջանից 1936-37թ.թ. 614 բռնադատվածների կեսը լենինականցիներ են: Բռնադատվածների մեջ մեծ թիվ (300 մարդ) են կազմում Արևմտյան Հայաստանից գաղթածները: Ի դեպ, նշենք, որ 1915թ. Արևմտյան Հայաստանից Ալեքսանդրապոլի գավառ գաղթել են շուրջ 25 հազ. մարդ[8]: Լենինականից բռնադատված 312 անձանցից 176-ը ծնունդով տեղացիներ են, մնացածները՝ եկվորներ, կամ Արևմտյան Հայաստանից գաղթածներ(տես աղ. 1) 1936 թ. բռնադատվածների թիվը Շիրակում շուրջ 100 մարդ է, որից 99-ը՝ տղամարդ և մեկը կին (Շեխսեցովա Ելենա Դմիտրիևնան, ծն. 1914թ., դատապարտվել է որպես սոցիալական վտանգավոր տարր):

Աղյուսակ 1

| Բնակավայրը | Բռնադատվածների թիվը | Տղամարդ | Կին |
|---|---|---|---|
| Լենինական | 312 | 309 | 3 |
| Արթիկ | 107 | 107 | - |
| Ամասիա | 42 | 42 | - |
| Թալին | 39 | 39 | - |
| Ջաջուռ | 16 | 16 | - |
| Այլ բնակ. և շրջաններ | 98 | 98 | - |

1936թ. բռնադատվածների տարիքային կազմի ուսումնասիրությունը տալիս է հետևյալ պատկերը.

1880-1890 թ.թ. ծնվածներ՝ 19 մարդ
1891-1900 թ.թ. ծնվածներ՝ 30 մարդ
1901-1910 թ.թ. ծնվածներ՝ 40 մարդ
1911-1920 թ.թ. ծնվածներ՝ 11 մարդ

Այսինքն, 1936թ. դատապարտվածների 80%-ը ակտիվ աշխատանքային (25-49) տարիք ունեցողներն են: Նրանց 76%-ը դատապարտվել է 3-5 տարով ազատազրկման, իսկ 8-10%-ը

*4. Լրաբեր Հասարակական գիտությունների, Երևան, 1991թ., դ 5, էջ 45:*
*5. Նույն տեղում, էջ 45:*
*6. Вопросы Истории, 1990г., № 11, стр. 75.*
*7. Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, հունիսի 20, 1993թ.,*
*8. Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1989թ., դ 1, էջ 64:*

գնդակահարվել է: Բռնադատվածների 20%-ը որակվել է որպես տրոցկիստ: Նրանցից միայն 8-ն է ազատվել պատասխանատվությունից, ընդ որում 6-ը եղել են կոլտնտեսականներ, 1-ը՝ Խոսրով Հարեթի Գևորգյանը՝ կոլտնտեսության նախագահ( Խ. Գևորգյանը Արթիկ է տեղափոխվել Կապանից): Որպես տրոցկիստներ 3-5 տարի ժամկետով դատապարտվել են հիմնականում բանվորները, ուսուցիչներ, ծառայողներ:

Բռնադատվածների 30%-ը ծառայողներ են, 30%-ը՝ կոլտնտեսականներ, 20%-ը՝ բանվորներ և 20%-ը սոցիալական այլ խմբերի ներկայացուցիչներ (վաճառականներ, եկեղեցականներ, մենատնտեսներ և այլն): 1936թ. բռնադատվածների մեջ բացի հայերից եղել են նաև այլազգիներ՝ երեք ռուս, երկու եզդի, երկու եզդի և մեկ ուկրաինացի:

1936թ.-ի համեմատությամբ՝ 1937թ. բռնադատվածներին ներկայացված մեղադրանքները և դատապարտման ժամկետները այլ են: Շիրակի տնտեսական շրջանում 1937թ. բռնադատվածները 514-ն են, որոնց գերակշռող մասը բանվորներ և կոլտնտեսականներ են: Բռնադատվածներից 321-ը դատապարտվել են մահապատժի, որոնցից՝ 80-ը՝ որպես դաշնակցականներ: Այսպես կոչված 11 «դաշնակցականներ» դատապարտվել են 10 տարվա ազատազրկման: Գնդակահարվածների գերակշռող մասը եղել են 40-50 տարեկան, իսկ 10 տարվա ազատազրկման դատապարտվածները բոլորն էլ ակտիվ աշխատանքային տարիք ունեցողներ են: 1937թ. Շիրակի շրջանում բռնադատվածների սոցիալական պատկանելության ամբողջական պատկերը պարզ չէ: Ասենք, որ բռնադատվածներից 10-ը հաշվապահներ են՝ բոլորն էլ դատապարտվել են գնդակահարության: Կան հոգևորականներ՝ (1-ը գնդակահարվել է լրտեսության մեղադրանքով), մոտ 50 ուսուցիչներ և այլն: 1937թ. բռնադատվածների մեջ, ի տարբերություն նախորդ տարվա, «տրոցկիստները» փոքր թիվ են կազմում: 9-ը տրոցկիստներից մեկը ազատազրկվել է 10 տարով, մնացածները՝ 5: Երեսունինն «հակահեղափոխականներ» դատապարտվել են մահապատժի: 1937թ. բռնադատվածներից՝ 303-ը Լենինականից են, 81-ը՝ Արթիկից, 54-ը՝ Ղուկասյանից (Աշոցք) և Ամասիայից, 14-ը շրջանի այլ բնակավայրերից:

Հատկանշական է, որ հաճախ բռնությունների են ենթարկվել նաև նույն ընտանիքի մի քանի անդամներ: Օրինակ՝ Լենինականում Խաչատրյանների ընտանիքից՝ Սերգո, Բագրատ և Աշոտ եղբայրները: 1937թ. բռնադատվածների 20%-ից ավելին Արևմտյան Հայաստանից Շիրակի շրջան գաղթածներն են (100 հոգի), որնցից 71-ը ապրել են Լենինականում, տասը՝ Թալինում, 15-ը՝ Արթիկում և շրջանում, 14-ը Ամասիայի, Ղուկասյանի և Ախուրյանի շրջաններում:

Ինչպես 1936թ. այնպես էլ 1937թ. նրանց ճնշող մեծամասնությունը հայեր են: Բռնադատվել են նաև 5 ռուս, 3 ուկրաինացի, 2 լեհ (Վրուբել Յան Վալենտինովիչ, ծն. 1873թ. և Վոյինսկի Նոյ Լվովիչ՝ ծն. 1883թ.): Ի դեպ, երկուսն էլ դատապարտվել են մահապատժի: 1937թ. բռնադատվածների մեջ երկուսը կանայք են՝ Կուզմիչենկո Զինաիդան (ծնվ. 1907թ.) և Վերբիցկայա-Խրթինյան Զոյիա Իոսիֆովնա (ծն. 1902թ.):

Ստորև ներկայացնում ենք 1936-1937թ.թ. բռնադատվածների տարիքային կազմի ամփոփիչ գծապատկերը:

Համոզված ենք, որ պետական իշխանությունների կողմից գործադրվող բռնադատման քաղաքականությունը իր բնույթով էապես պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական և



քաղաքական իրավիճակով: Երկրում 20-30-ական թվականներին կառուցվում էին նոր արդյունաբերական ձեռնարկություններ, Լենինականի հիդրոէլեկտրակայանը, Շիրակի ջրանցքը և այլն: Այս պայմաններում 20-ական թվականներին մասնավոր սեփականություն հանդիսացող խանութների, արհեստանոցների մեծ մասը ղեկավարվում էր համքարական ու արհեստավորական ավանդական կանոններով և իր եզրոությամբ ու կազմակերպվածությամբ չէր կարող խոչընդոտել խորհրդային իշխանության տնտեսական ձեռնարկումներին: Բազմաթիվ արհեստավորական կազմակերպություններ, չհամակերպվելով ստեղծված նոր իրավիճակին և չդիմանալով մրցակցությանը, սերտաճում էին պետական ձեռնարկություններին և աստիճանաբար վերանում: Իսկ «Նէպմանների» ձեռնարկությունների ազգայնացումը, արհեստավորական մասնավոր օբյեկտների բռնի միացումը պետական ձեռնարկություններին, առաջացնում էր բնակչության նշված խավերի դժգոհությունը:

Հետևաբար այս պայմաններում կիրառվող բռնարարքները, եթե մի կողմից միջոց էին խեղդելու մտավորականների, միջակ գյուղացիների, արհեստավորների ու «նէպմանների» դժգոհությունը, մյուս կողմից՝ «դժգոհ» տարրերի աշխատուժի բռնի, մասսայական օգտագործման ապահովմամբ նպաստում էր իրականացնելու ստալինյան արդյունաբերականացման և կոլեկտիվացման ծրագրերը:

## НЕКОТОРЫЕ ДЕМОГРАФИЧЕСКИЕ ВОПРОСЫ РЕПРЕССИЙ 1936-1937 ГОДОВ В ШИРАКЕ

**РЕЗЮМЕ**

**А. БОЯДЖЯН**

*По сталинским репрессиям 30-ых годов в русской историографии, не в пример армянской, прослеживается ряд серезных исследований.*

*В данном сообщении представлена актуальность демографического анализа характерных и специфических особенностей сталинских репресий 1936-1937 годов в Ширакском экономическом регионе.*